

4) Հոգաբարձական խորհրդի անդամների կէսը 2 տարուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով:

5) Վիճակային ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերաստուգող յանձնաժողով, որի եզրակացութիւնը հաղորդւում է էջմիածինի Սինօդին:

6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհուրդների հաշիւները, հաստատւում են էջմիածինի Սինօդից:

Դ. Վանքապատկան գոյքերի կառավարութեան մասին:

1) Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնւում է վանական իշխանութեան:

2) Վանքապատկան գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրայ հսկելու համար կարող են հրաւիրուել թեմական առաջնորդի կողմից և աշխարհական անձեր՝ օգնելու վանքական իշխանութեան:

ԱՐԻՒՆԱԼԻՑ ՕՐԵՐԸ ԿՈՎԿԱՅՈՒՄ

Դարձեալ արին, կրակ և աւերածութիւն...

Փետրուարեան դժբախտ օրերից յետոյ, ըստ երևոյթին ուժերը ժողովելու և մի նոր, աւելի խոշոր ձեռնարկութիւն սկսելու համար, թուրքերը լռել էին և խուլ կերպով պատրաստութիւններ տեսնում:

Ո՛չ միայն սենատօր Կուզմինսկին գիտէր, գուշակում էր լինելիքը և լռեց, այլև մինչև իսկ տեղական իշխանութիւնները ստացան զգուշութեան ազդարարութիւն և հնար չունեցան արինհեղութեան դէմն առնել: Հնարք չունեցան, չը կարողացան կամ չը կամեցան—այդ դեռ հարց է՝ բաւական մութ, բաւական հետաքրքրութեան արժանի: Խնդիրն այն է, որ Կովկասի ամենանշանաւոր, գործարանական ամենաբազմամարդ քաղաքը պատերազմի դաշտի փոխուեց և... իշխանութիւնները մնացին շուարած, յանկարծակիի եկած:

Սակայն, պէտք է ճշմարիտ լինել, թուրքերը չէին կամենում այդքան շուտ սկսել. ամեն ինչ պատրաստ չէր նրանցում: Կանաչ դրօշը բարձրացնելու: Դէպքերը վրայ հասան և արագացրին գործը:

Փետրուարեան օրերից յետոյ մի արտասովոր յանդգնութիւն էր երևան եկել Բագուի թուրք հասարակութեան մէջ. յանդգնութիւն, որ ապշեցնում էր նոյն իսկ ռուսներին: Օդի-

մէջ կախուել էին սպառնալից ամպեր, պահ մի ևս և պիտի պայթէր:

Ասել, որ տնտեսական պատճառներ են երկու ազգերի բաղխման առիթը—կը լինէր սխալ, որովհետեւ ստատիստիկան Բագուի մասին այլ բան է ասում: Ասել—ինչպէս փորձեց պնդել Ամիլախվարին և պնդում են այժմ թուրքերը—թէ հայ յեղափոխական կոմիտէներն են առիթ տուողները—կը լինէր կատարեալ տխմարութիւն, որովհետեւ այդ կոմիտէները ոչ մի գործունէութեան հող չունին կովկասում և նրանց ջանքն ամբողջ միմիայն նուիրուած է թիւրքահայերի դատին:

Ուրեմն ի՞նչ, ի՞նչու թուրքերի այդ յարձակումները:

Նախ քան այդ մասին ունէ կտրական վճիռ տալը, մեր ընթերցողների առաջ ենք պատկերացնում լերկ իրողութիւնները քաղելով ականատես թղթակիցներից, այլև պաշտօնական աղբիւրից հաղորդուած հեռագիրներից:

ՇՈՒՇԻՈՒՄ. Ամիս ու կէս առաջ, երբ ժողովրդի մտքերը դեռ բաւական խաղաղ էին, Շուշի—Եւլախեան խճուղու վրայ, քաղաքից 3 վերստ հեռաւորութեամբ, կողոպտում են Բագուից եկած 40 ճանապարհորդների: Կողոպտողներն են 20-ի չափ ձիաւոր և հետեակ զինուած թուրքեր: Երբ կողոպտում—վերջացնում են, գոչում են ճանապարհորդներին—«Հայերը թող մի կողմը քաշուին, թուրքերը միւս կողմ»: Թուրքերին ձեռք չեն տալիս, իսկ հայերին—մինչև իսկ կանանց և երեխայոց—կողոպտում են մինչև ծայրահեղ մերկութիւն, ծեծում, անպատկառ հայոյանքներ թափում գլխներին և՛ թողնում—հեռանում:

Այս դէպքն իր բնորոշ հանգամանքի շնորհիւ՝ շփոթութիւն է առաջ բերում հայերի մէջ: Դիմումներ են անում ոստիկանութեան և համերաշխութեան յանձնաժողովի թուրք անդամներին, բայց ոչ մի հետեանք չէ ստացւում: Խճուղին անպահով է համարւում մի այնպէս ժամանակ, երբ շատերը մտադիր էին հեռանալ քաղաքից:

Այս դէպքերից յետոյ, օգոստոսի սկզբներում արիւնահեղ ընդհարումներ են տեղի ունենում Խաչէնի վանք գիւղի թուրքերի և հայերի մէջ, ինչպէս և Զինլու և Փառքանլու: Համարեա միաժամանակ, Շուշու թուրքական թաղում, գիշերուայ ժամը 1-ին սպանւում է մի լապտերավառ խղճուկ թուրք: Ժամը 4-ին, երբ մի քանի հայեր վերադառնում են Դոնավարդ գիւղից նոյն թաղով քաղաք, սպանուած դիակի մօտ համախմբուած թուրքերը յանկարծ սկսում են գնդակա-

հարել նրանց: Մէկը ընկնում է, իսկ միւսները փախչում են քաղաք:

Իսկոյն աղմուկ ու շփոթութիւն: Թուրքերը սկզբում մեղադրում են որ իբր թէ այդ երեք հայերն են եղել լապտերավառին սպանողները, սակայն երբ հնարաւոր է լինում հարցը բացատրել և երեք հայերը անմեղ են հռչակում, թուրքերը այս անգամ մեղադրում են ուրիշ երեք հայերի:

Այդ ինքնըստինքեան չնչին դէպքը, կարծես ազդանշան, (և ինչպէս յետոյ կը տեսնենք, Բագումն էլ նոյն ձևով է սկսում) անմիջապէս Շուշի-Եւալիսեան ճանապարհի վրայ գտնուող Աղդամ կոչուող տեղն են հաւաքւում հազարաւոր թուրք ձիաւորներ և յարձակւում օմնիրուսների (հանրակառքերի) վրայ, կողոպտում 100-ի չափ հայ և ուսու ճանապարհորդների, անգթօրէն ծեծում, մի քանսին դաշոյնով վիրաւորում և բոլորին էլ երկու սինեակի մէջ մի քանի օր շարունակ փակուած պահում:

Գանձակի փոխ-նահանգապետը հասնելով այնտեղ, ինքնիրեն անզօր է հրատարակում պատժելու խուժանին և վերադարձնելու թալանը: Սակայն ճանապարհորդները մի կերպ կառողանում են ազատուել և իրենց Շուշի ձգել:

Անմիջապէս քաղաքում հայերն զգում են որ մօտեցել են արիւնալից օրերը: Թուրքերն ու հայերը կատարում են տեղափոխութիւն. քաղաքը երկու մասի—միմեանց դէմ ելած բանակների է բաժանւում: Փոթորիկը մօտ է, ջղերը լարուած են և բոպէ առ բոպէ սպասում են ընդհարման:

Հասաւ օգոստոս 16-ը: Տեղ-տեղ և հատ-հատ սկսում են սպանութիւնները: Թուրքերը սպանում են հարուստ ուսու կապալառու Լուսնակիին, որին նրան սաստիկ ատում էին, որովհետև առաջին քրիստոնեան էր, որ յանդգնել էր գնել խանի աղջկայ տունը և այնտեղ բնակուել:

Յանկարծ միմեանց ետևից սկսւում է հրացանաձգութիւնը: Իրարանցումն ընկնում է. թուրքերը դիրք են բռնել, հայերն էլ արագութեամբ բռնում են իրենց դիրքերը և կռիւն սկսւում է. կռիւ անխնայ, կատաղի և վայրենի: Հասնում է զօրախումբ, թուրքական թաղերի մօտ ապրող հայ ընտանիքները անցնում են հայկական կենդրոնները. բազարում մնացած հայ վաճառականների և արհեստաւորների դրութիւնը անյայտ է: Հրացանների գնդակները վզվզալով անցնում են թաղից թաղ մինչև մութ գիշեր և միայն հինգ ժամ զինադադարից յետոյ: Նոյն օրը մեր թղթակից պ. Անդր. Պետրոսեան եր. 7 Ժ- 10 ր. հե-

ռազրուում է մեզ. «Զինուած թուրքերը յարձակուեցին հայերի վրայ, կոտորում են. անհրաժեշտ է օգնութիւն»:

Միւս օրը, 17-ին, արշալոյսի հետ, թուրքական թաղից հայկական թաղն են անցնում Մօսինի գնդակներ և դում-դումի տրաքոցներ: Լուսաբացին զոհեր են, որ ընկնում են այս-այն կողմ: Թուրքերը կտրում են քաղաքի ջուրը, քաղաքից դուրս, Աղզամի գործարանների նման, հրդեհում են Թամիրեանի գործարանը, հրդեհում ամէն հանդիպած տուն. Աղզամից քաղաք են հասնում զինուած թուրքեր, սակայն այնքան զօրեղ է լինում հայերի ինքնապաշտպանութիւնը և այնպիսի մեծ աւեր են սպառում նրանց գնդակները, որ ժամը 10-ին թուրքերը հաշտութեան առաջարկներ են անում, սակայն իրենք հէնց, պատուական գտնելով, չեն գալիս նշանակուած տեղը և միւս կողմից շարունակում են կռիւն ու աւերածութիւնը:

Թողնենք այժմ որ դէպքերի մէջ եղած ականատեսը խօսի.

«Օգ. 16-ին առաւօտեան քաղաքի վերին մասում թուրքերը հայերից սպանեցին մէկին և վիրաւորեցին երկուսին, որոնք փախչելով կարողացել են ազատուել, իսկ քաղաքի ներքևի մասում հանգստարանի մօտ կտոր-կտոր արին մի գիւղական քահանայի որդու. միւսոյն ժամանակ սպանել են նախկին հաշտարար դատաւոր Լուսեակինին, ուոյն այդ օրը կէսօրից յետոյ ժամը 3—4-ին թուրք պօլիցմէյստերը հայոց շուկայի մէջ ատրճանակի երկու հարուածով մահացու կերպով վիրաւորեց ոսկերիչ Յարութիւնին, այդ ազդանշան ծառայելով թուրքերին վերջիններս յարձակուեցին իրենց թաղից հայերի վրայ և սպանեցին երեքի. բաժակը լցուած էր.—հայերը կատաղաբար հակադարձակում գործեցին թուրքերի վրայ և քչեցին քաղաքի առաջին մասից մեծ ջարդ տալով նրանց. սկսուեց սարսափելի հրացանաձգութիւն: Կոիւր գիշերն էլ շարունակուեց, երկրորդ օրը առաւօտեան հայերը քաղաքի հիւսիս-արեւելեան մասից յարձակուեցին թուրքերի վրայ և քչեցին մինչև ուսաց եկեղեցու մօտ. թուրքերը վաղօրօք գիւղօրայքից մարդիկ էին բերել տուել. երկրորդ օրն էլ եկան 200—300 հրացանաձիգներ: Հայերը վերադարձան իրենց դիրքերը կորցնելով 2 սպանուած և բերելով չորս վիրաւոր. ժամը մէկին հայերը քաղաքի կենդրոնից դարձեալ յարձակուեցին թուրքերի վրայ և քչեցին բաւականին տեղ, յետոյ թուրքերը սկսեցին դիրքերն ամրացրել. ամենալաւ զինուած մարդը դիրքեր գրաւեց քաղաքի հարաւ արեւելեան մասում գտնուած Գէօվհար-ու-

ղայի տանը, որ գտնուում է մի հարթավայրում. այդ դիրքը հայերի համար վտանգավոր էր, որովհետեւ թուրքերի զնդակները այդ տնից յաջողութեամբ հասնում էին մեր դիրքերին և այդ մասում արգելում էր հայերի շարժումը. հայերից 15 հոգի շուտափոյթ դիրք գրաւեցին Գեօվհար-աղայի տնից բարձր քաղաքից հարաւ ժայռոտ բարձունքների վրայ և սկսեցին զնդակահարել տունը, այդ ժամանակ քաղաքի արեւմտեան կողմից հայ դիրքապահները լուր բերին, որ «Ջարսլու» գիւղի թուրքերը եկան և ուղում են մտնել քաղաք, անմիջապէս վերևի դիրքերը ուժեղացրուեց. «Ջարսլուի» թուրքերը տեսնելով որ անհնարին է քաղաք մտնել, հրդեհեցին Թ. Թամիրեանցի գործարանը, որը Շուշուց ¹/₄ վերստ հեռու է գտնուում: Քաղաքի արեւմտեան մասի հայ-դիրքապահները այդ տեսնելով, ուզեցին հրդեհել թուրքերի Թազա-մարլան, զօրանոցի մօտ, թուով 20 տուն, բայց այդ անել քաղաքիս հայերը թոյլ չը տուին, մասնաւանդ որ տեղական զօրքերի հրամանատարը խնդրել էր հայերին չանել այդ, բայց յանկարծ տղաները վերևից մարդ ուղարկեցին, որ «Թազա-մարլի» թուրքերը իրենց տներից մեզ վրայ կրակ են անում, այդ արդէն չափազանց էր և հրամայուեց հրդեհել Թազա-մարլան. արեւմտեան բարձունքներից հայերն սկսեցին արգելել թուրքերի շարժումները Թազա-մարլում, իսկ մի մասը ցածրացաւ դէպի տները՝ հրդեհելու: Երեք տուն յաջողութեամբ վառելուց յետոյ, հայերը ուռա զինուորներին խնդրեցին դուրս բերել թուրք կանանց և երեխաներին տներից ու հանել զօրանոց, որովհետեւ նրանք մեզ հաւատ չէին ընծայում և վախենում էին դուրս գալ տներից: Զինուորները կատարեցին մեր խնդիրը, և բացի երեխաներից ու կանանցից տարան նաև կենդանի մնացած թուրք տղամարդկանց: Գիշերը դրսից եղած թուրքերը միանալով տեղային թուրքերի հետ մի կատաղի յարձակում գործեցին հայերի բոլոր դիրքերի վրայ, բացի արեւմտեանից, բայց մեծ կորուստներով յետ մղուեցին: Հայերի ամեն մի դիրքում կային կազակներ և զինուորներ, որոնք առաջին և երկրորդ օրը մասնաւոր օգնութիւն էին հասցնում հայերին:

Երրորդ օրը եկաւ նահանգապետի օգնականը և հաշտութեան համար ուղղակի իջևանեց Ղազու մօտ, նորա գալը ոչ մի ազդեցութիւն չը գործեց կռուող կողմերի վրայ և կռիւը շարունակուեց: Զինուորները և կազակները դադարեցին օգնութիւն հասցնել հայերին, նրանք երրորդ օրը ասացին, որ՝ մեզ հրամայուած չէ միջամտել, այլ չեզոք դիրք բռնել... Հայերը չը

յուսահատուեցին և դարձեալ յարձակուեցին թուրքերի վրայ «Ջուլուլդ»-ի թաղից և դարձեալ ջարդ տալով վերադարձան իրենց դիրքերը, իսկ միւս դիրքերում շարունակուեց փոխադարձ հրացանաձգութիւն:

Երեկոյեան դէմ սկսուեց հայերիս համար մի սարսափելի իրողութիւն. թուրքերը քաղաքի կենդրոնից հրդեհեցին հայ-թրքական թաղերի մօտ մի քանի հայի տուն և որովհետեւ հայերի տները Շուշում շատ են կպած իրար և խիտ են, սկսուեց մի չը տեսնուած հրդեհ. քամին արեւելքից էր և հրդեհը հակայական չափեր ընդունեց և սպառնում էր լափել հայերի ամբողջ թաղերը. երրորդ գիշերը մի սարսափելի գիշեր էր. հրդեհից մօտակայ գիւղերը լուսաւորուել էին... հայերը շփոթուեցին, թուրքերը օգուտ քաղելով այդ շփոթութիւնից, առաջացան իրենց դիրքերից և գրաւեցին հայերից աւելի մօտիկ գիւղեր. ամբողջ գիշեր շարունակուեց հրդեհը և միայն օրու կէսից յետոյ դադարեցրին հրդեհը և առաջն առան, բայց մինք կորցրինք մեր ամբողջ շուկան և բազմաթիւ հայ ունեւորների տներ այրուեցին. ով կարողացել էր շուկայից իւր ապրանքը փախցնել՝ փախցրել էր, ով չէր կարողացել, այրուել էր. մարդկային զոհեր շատ չեն եղել, միայն մի տնում այրուել են երեք հոգի հայր-մայր և որդի, որոնք վախեցել են զուրս գալ տնից. ֆլամսը շատ միլիօնների է հասնում... իսկ այրուած են մօտ 300 տուն: Հրդեհի և իրարանցման ժամանակ շատ սրիկաներ օգուտ են քաղել չիոթ դրութիւնից և թալանել են բազմաթիւ տներ և խանութներ, որ այժմս յետ ենք ստանում, խուզարկելով տները:

Զորրորդ օրը հրացանաձգութիւնը շարունակուեց աւերակների միջից... Թուրքերը մի քանի անգամ յարձակուեցին նահատակի կողմից, բայց յետ մղուեցին. այդ օրը փոխադարձ յարձակումներ երկու կողմից էլ եղան, բայց երկու կողմն էլ միշտ յետ էին նահանջում: Զորրորդ օրուայ կռիւը գիշերն էլ շարունակուեց, թուրքերը դրսից ստանում էին թարմ ուժեր, այդ իմանում էինք հեռադիտակով և Շուշու գիւղից եկած մի քանի մարդկանցից, իսկ մեր կռուողները առաջին օրից մինչև վերջին օրն էլ միևնոյն կռուողներն են եղել: Զորրորդ օրը, երբ կռիւը երեկոյեան դէմ նահատակի կողմում տաք բնաւորութիւն էր ստացել, յանկարծ կռուող տղաների մօտ յայտնուել է գաւառապետի 20—21 տարեկան տղան և յայտնում, որ՝ «հաշտութիւն է կայացել, միջ աղձակիլ»: Տղերքը իսկոյն դադարեցնում են հրացանաձգութիւնը, բայց թուրքերը

շարունակում են և առաջ խաղում դէպի մեր դիրքերը. հայերը յետ են նահանջում, թուրքերը զբաւում են հայերի դիրքերը և սկսում աւելի առաջանալ դէպի հայկական նահատակի թաղը, հայերը տեսնում են, որ հաշտութեան ոչ մի ձայն չը կայ և խաբուած էին:

Մարգար Ժամհարեանի առաջնորդութեամբ մի ուժգին յարձակում են գործում թուրքերի վրայ և նորից յետ խլում դիրքերը: Հայերից այդ կուում շատ սպանուածներ և վիրաւորներ եղան. սպանուեց Մարգար Ժամհարեանը:

Զորրորդ օրուայ գիշերը լոյս հինգշաբթի թուրքերի մի խումբ մօտ 15 հոգի օգուտ քաղելով հրդեհուած տներից մտնում են Ագուլեաց եղեղեցին և արնտեղ դիրքեր շինում: Առաւօտեան, հինգերորդ օրը թուրքերը սկսեցին եկեղեցու զմէթից գնդակներ արձակել և սպանեցին այնտեղից մի քանի հայ, իսկ ներքեից հաղարաւոր թուրք ամբոյս «Ճա' Ալի» գոռալով ուղեց ներս խուժել քաղաքի կենդրոնը. հայերը տեսնելով մօտալուտ վտանգը մեծ ոյժ կենդրոնացնելով հակայարձակում գործեցին և քեցին վայրենի ամբոյսը, յետոյ շրջապատեցին եկեղեցին և սկսան գնդակահարել միջի թուրքերին. հէնց այդ ժամանակ հարաւ-արեւելեան մասում գտնուած հայկական դիրքերից որոտաց Ռուս-Պարսկական պատերազմի ժամանակից մնացած ժանգոտած և անպէտքացած Թնդանօթը, որի վրայ հայերը չարչարուել էին երկու օր, մինչև կարողացել էին կարգի բերել, նորից որոտաց Թնդանօթը, Ագուլեաց եկեղեցու միջի թուրքերի մի մասը սպանուեց, իսկ միւս մասը փախաւ, իսկ հարաւ արեւելեան մասի դիրքերից հայերը «ուռռա՛» աղաղակելով յարձակուեցին Գեօվհար Աղի վտանգաւոր տան վրայ և զբաւեցին տունը: Թնդանօթը որոտաց երրորդ, չորրորդ անգամ և պատռուեց, այն ժամանակ, երբ յաջողութիւնը մեր կողմն էր կէսօրուայ մօտ՝ քաղաքի թուրք հայկական սահմանագծի վրայ երևաց սպիտակ դրօշակը, որ պարզել էին թուրքերը, իսկ նրանից ներքև թրքական թաղում երաժշտական խումբը նուագում էր հայկական քայլերգը «Մեր հայրենիք»... ջատ տեղերում, քաղաքի մէջ, որտեղ հաշտութեան ձայնը չէր հասել, թուրքերի ջարդը շարունակոււմ էր դեռ: Վերջը հաշտուեցինք, բայց լինչ հաշտութիւն, լոկ խօսքերով հաշտութիւն:

Սպանուածների և վիրաւորների թիւը դեռ որոշ չէ. հայերից սպանուած և վիրաւորուած են մօտ 100 - 120, իսկ թուրքերի սպանուածները և վիրաւորները տասնապատիկ են: («Տարազ»)

Թուրքերը սպիտակ դրոշ են պարզում, հաշտութիւն խնդրում միայն այն ժամանակ ուրեմն, երբ հայ ինքնապաշտպանութիւնը ջարդ ու փշուր է անում նրանց ծրագիրը և սպառնում ընաջինջ անելու աւազակներին...

Հաշտութիւն, թափօ՞ր, համբժյո՞րներ... Ա՛խ, որպիսի դառն հեգնանք, որպիսի՜ կատակերգութիւն: Չէ՞ որ այդ թափօրներից յետոյ նոյն աւազակները, որոնք համբուրուել էին, խաղաղութեան դրոշ պարզել, նոյն այդ արիւնարբուները, երբ ոյժ են կուտում, դրժում են ամէն սրբութիւն և դարձեալ արիւն թափելու ելնում...

«Ձարկ և կը փշրես» դրդել են նրանց դրդիչները և նշրանք զարնում են, բայց փոխանակ փշրելով՝ փշրում են... և դիմում են կեղծ հաշտութիւնների, որպէս զի դիմացինին քնացնեն և դաւաճանութեամբ նորից սկսեն:

Ու երբ զէնքով չեն զօրում—կրակին են դիմում:

Այդ նոյնը եղաւ Շուշի, այդ նոյնը կրկնուեց Բազու, ամէն տեղ. նոյն խարդախ սպիտակ դրոշը, որի տակ ապաստանած՝ յարձակում են միամիտ հաւատացողների վրայ, նոյն հրդեհով ոչնչացնելու ծրագիրը:

Օգոստ. 16-ին սկսում է Շուշի, այնտեղ խաղաղութեան դրոշ է պարզում (որովհետեւ յաղթւում են աւազակները), այնտեղ թափօրներ են կազմում (յակամայից) և հաւ 20-ին իրենց արիւնակիցները սկսում են Բազում:

Նախ քան այս քաղաքում կատարուած դէպքերը պատմելու, աւելորդ է՞ր լինիլ տալ այստեղ «Neue Freie Presse»-ին Շուշիից գրածները, որոնք թէև համառօտ, բայց ճիշտ կերպով արձանագրում են եղածները:—

«Բազուի և Նախիջևանի արիւնահեղ դէպքերից սկսած, թուրքերը, խրախուսուած պան-իսլամիստներից, գլուխ բարձրացրին և սկսեցին ուժեղ գործունէութիւն ցոյց տալ: Այդպիսով նրանք յաջողութեամբ շարժել և Շուշուայ մահմեդական ազգաբնակչութիւնը: Օգոստ. 16-ին թուրքերը սպանեցին երկու հայի և այդ բանը պատճառ եղաւ երկու ազգութիւնների ընդհարման: Շուշի 20,000 թուրք կայ և նոյնքան էլ հայ (որքան ճիշտ է): Յայտնի Հիւսէյն բէկ Ղիւանշիրցու առաջնորդութեամբ, մահմեդականները յարձակուեցին հայերի վրայ: Հայերը գերեցին Ղիւանշիրցի խանին, նրա մերձաւորներին և մի քանի հարիւր (չափազանցած) մահմեդական, գինաթափ արին և պատանդ պահեցին իրենց մօտ: Սրան հետեւեց սաստիկ հրացանաձգութիւն քաղաքի բոլոր մասերում: Մահմեդական թաղը

կրակ սկսեց: Երեկոյեան արդէն կային 95 սպանուած, որոնցից 10-ը հայ. 20 հայ վիրաւոր. մահմեդականների վիրաւորների թիւը անյայտ, բայց անշուշտ խիստ մեծ: Գանձակի նահանգապետը 1000 (?) կողակով գնաց և հազիւ հասնի Շուշի: Հրդեհ է ընկել հայոց թաղերում. սպառնում է վտանգ Գանձակի ամբողջ նահանգին իւր 600 հազար բնակիչներով: մահմեդականների յայտարարած սրբազան պատերազմի բնաւորութիւն է ստանում: Թուրքերը իրենց զէնքը այժմ ուղղում են դէպի ոռոսները: Աղգամի շրջանում թուրքերը ապստամբուեցին ոռոս իշխանութեան դէմ:

Եթէ կամենայինք մի առ մի զետեղել այստեղ թէ ինչ են ասում Եւրոպական և Ռուսաստանի թերթերը, պէտք էր ամբողջ հատորներ գրել: Հարցը այժմ պարզ է. պան-խալամական ձգտումները պարզել են ապստամբութեան դրօշը և հայր քաւութեան նոխազն է հանդիսանում...

Սակայն, անցնենք դէպքերին:

ԲԱԳՈՒ. Հազիւ թէ թաքօր էր կազմուել և խաղաղութեան դաշինք կնքուել Շուշի, որ օգոստ. 20-ին թուրքերը մի աւելի զօրեղ շարժամբ և պատմութեան մէջ միմիայն Լէնկ-թէմուրի սխրագործութիւններն յիշեցնող վայրագութեամբ սկսեցին կոտորածները:

Դեռ օգոստոսի 17-ից Բագու տանող գնացքներում ճանապարհորդներին սարսափեցնում էին Բագուից եկած լուրերը: Որպէս թէ այնտեղ կոտորածը սկսուել է և կոտորուողները հիմա ոչ թէ հայերն ու թուրքերն են, այլ ընդհանուր գործադուլի պատճառով, ընդհարումներ է տեղի ունեցել զօրքի և բանուորների միջև:

Բայց բարեբաղդաբար քաղաքը հանգիստ էր և գործադուլ անողները միայն հացագործներ, ձիաքարշի ծառայողներն ու մի քանի տեղերի բանուորներն էին:

Չնայած դրան, Ժողովուրդը այնքան գրգռուած էր, որ ամեն մի ջնջին վէճից սպասւում էր թէ անակրպայթի: 19-ին ձիաքարշերը սկսեցին բանել զինուորների ձեռքով: 20-ին, շաբաթ օրը, Ժամը 4—5-ի մօտերքը ձիաքարշի ծառայողները յարձակուում են զինուորների վրայ ու ստիպում դադարեցնել գործը: Մի քանիսին յաջողւում է խաղաղ ցրուել, իսկ մէկի դէմ ստիպուած են լինում զէնք գործածել և հրացան են արձակում նրա վրայ: Այդ ձայնը բաւական էր զրգուած Ժողովրդին կարծելու, որ արդէն սկսուել է: Մի ակնթարթում բո-

լոր խանութները փակուեցին. փախչել — ազատուելն էր ամենքի գլխում ծագած առաջին միտքը: Իսկոյն քաղաքը երկու մասի բաժանուեց. թուրքերը խանութները փակեցին և քաղուեցին իրենց թաղերը: Նոյնպիսի մի դէպք, որ պատահեց համարեա նոյն ժամին, բաւական էր սկսելու կոտորածը: Կրասնովոդսկի փողոցում սաավաճառների խանութների մօտ, մի հայ թուրքի հետ վէճի է բռնուում. վէճը սուր կերպարանք է ընդունում. ատրճանակներ են արձակում, որից վիրաւորւում է մաավաճառ թուրքը. իսկոյն թուրք ամբոխը ատրճանակներով հասնում են այնտեղ, վիրաւորին դնում են պատգարակի վրայ, անց են կացնում Չադրովի փողոցով մինչև Տատարսկայա փողոցը, հետզհետէ հաւաքելով ու գրգռելով թուրք ամբոխին:

Փետրուարեան դէպքերից յետոյ, հայ ազգաբնակուծիւնը Շամախինկա կոչուած և միւս թրքական թաղերից փախել տեղափոխուել էին Տելեֆօնեան-Կանտապեան թաղերը. այդ երեւոյթը կարծել էր տալիս, որ եթէ մի անգամ էլ թուրքերի կողմից յարձակում լինի, անպատճառ այդ կողմերից կը դան. այդ պատճառով հէնց որ հրացանաձգութիւնն սկսուեց, բոլորն իրենց խանութները փակեցին և փոխանակ տներումն ամրանալու, զինուում էին ունեցած զէնքերովը և խումբ-խումբ կանգնած փակ խանութների առաջ սպասում էին չգիտենալով ինչ դիրք բռնել: Տելեֆօնեան և մօտակայ թաղերին յայտնի չէր թէ ի՞նչ է կատարւում քաղաքի կենդրոնում-Պարապետում: Անդադար իրար հակասող լուրեր էին հասնում, թէ կամ ոչինչ չկայ խաղաղ է, կամ իրր թէ թուրքերն յարձակուել են արդէն, շրջապատել Պարապետին ու մտել եկեղեցին: Հասկանալի է թէ այսպիսի լուրերը որ աստիճան կարող էին գրգռել հայերին, որոնք մինչ այդ՝ պաշտպանողական դիրք էին բռնել: Նրանք սկսեցին անխնայ գնդակահարել անցորդ փախչող թուրքերին, լինէր նա անմեղ, անպաշտպան համալ կամ սրիկայ. միայն թէ նա առանց զինուորների ուղեկցութեան լինէր, որովհետեւ զօրքը ղեռ ևս անաչառ դիրք բռնած՝ անխնայ կրակում էր նախայարձակողների վրայ, ով էլ լինէր:

Գիշերը անցաւ անսպասելի խաղաղ, միայն մի քանի տեղերում զինուորները զալպերով ցրուել էին խմբուած թուրքերին:

Կիւրակի առաւօտ փողոցներում կային մեռած, 8—10 հայ, 15—20 թուրք: Երկու կողմից սպասողական դրութիւն էր. կառքեր չկային, բացի մի քանի ոռու կառապաններից. թուրք ասուած տարրը միանգամայն չքացել էր հայկական

Թաղերից. ժամը 9-ի մօտերքը մի երկու անգ ընդհարումներ էր տեղի ունեցել. մի տեղ հայերը երկու թուրք բանուորների էին խփել, միւս տեղում թուրքերը երկու ղռնապան սպանել ու վիրաւորել: Հայոց գիւղից (Էրմանիքէնդ) յուսահատեցնող լուրերը էին հասնում. թուրքերը շրջապատել էին, քանի անգամ յարձակում էին գործել ու յետ մղուել հայ զինուած տղաների կողմից: Նահանգապետը զօրք և Թնդանօթ ուղարկեց: Երեկոյան 9—10 ժամին սաստիկ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ. պարզուեց որ հրշէջների կայարանի կողմերում մի տեղից զընդակ են արձակում զօրանոցի վրայ, զօրքերը կարծելով, որ հայերը կը լինեն, որովհետև շրջակայքը հայեր են ապրում, միահամուռ հրացանաձգութեամբ յարձակում են հայերի տնե-րի վրայ, սպառնում են քարոքանդ անել: Լաւ, որ մարդկա-յին զոհեր չեն լինում:

22-ին երկուշաբթի առաւօտ, նահանգապետը հրամանա-գրով յայտնում է ժողովրդին, զգուշանալու կտուրներից, ղռնե-րից և լուսամուտներից հրացան կամ ատրճանակ արձակել, աշխատել պաշտպանողական դիրք բռնել, իսկ եթէ թուրքերի կողմից յարձակում տեղի կունենայ, նախ քան կռուի բռնուելը, յայտնել զօրք ուղարկելու. եթէ կը համարձակուեն դրժել հրա-մանը, կը ուժակոծուի այն տունն ու թաղը, որտեղից գնդակ կարձակուի և կը հետացուի այդ կողմերից զօրքը բոլորովին անպաշտպան թողնելով նրանց:

Նոյն առաւօտ 11—12 մօտերքը լսում է 3 ուժգին թընդանօթային հարուածներ: Ուժակոծել էին Փիլիպպոսեան եղ-բայրների գործարանը և էլի երկու հայերի երկու տներ. պատ-ճառը լինում է այդ կողմերից արձակուած ատրճանակը, որը էլի կարծւում էր թէ հայերի գործն է: Այդ կերպ ուժակոծուեցին հայերի շատ տներ: Բայց քիչ քիչ պարզուեց թէ որտեղից էր արձակւում գնդակը և ճվքեր են արձակողները: Նաւթա-հանքերում (Բալախանի) կիւրակի մինչև ժամը 4—5 բռնագոս հանգստութիւն էր: Քաղաքից հասած լուրերը չէին կարող նը-րանց անտարբեր թողնել: Երկու կողմից էլ նոյն սպասողական դրութիւնը: Ժամը 4—5 ի մօտերքը սկսւում է զանազան կողմերից հրացանաձգութիւն, բայց ճշտուելով դուրս է գալիս որ խուլիգանների գործն է այդ: Գիշերը խաղաղ է անցնում, իսկ լուսադէմին Սաբունչիի կողմից լսւում է միանգամից 20—30 հարուածների ձայներ, խառը զանգահարութեան հետ. չըճշտուեց եկեղեցու զանգե՞րն էին, թէ՞ մի ուրիշ տեղից: Դրա-նից յետոյ խաղաղ էր մինչև լոյս: Երկուշաբթի 22-ին ժամը

2—3-ին սկսուեցին հրդեհներ. միանգամից այրոււմ էին մի քանի ֆիրմաներ Բալախանիի զանազան ծայրերում:

Փոքր ֆիրմաներում ծառայող հայերը յարմար դատեցին ընտանիքներով մեծ ֆիրմաներում ապաստանել, որտեղ ղինուած հայ բանուորները նրանց կը կարողանային պաշտպանել: Այդ ֆիրմաներից են Ջաբրաթում՝ Փիթոյեան, Մանթաշեան, «Արամազդ» «Սաուչաստնիկ» և նաւթագործների խորհրդարանը Սաբունչիում:

Մինչև երեկոյ հրդեհը զանազան ծայրերից տարածուելով և միանալով Բալախանին ներկայացնում էր կրակի ու բոցերի ծով: Սև ծխի միջից հազիւ նշմարելի էր խորհրդարանի սպիտակ շինութիւններն ու ոռոսաց եկեղեցին: Բամանցիներն ու Ջաբրաթցիները միանգամայն կտրուած էին ամեն յարաբերութիւնից. զօրքը հրաժարոււմ իր օգնութեան գնալ՝ վախենալով թուրքերի յարձակումներից: Յուսահատ դրութեան մէջ էին Բամանիում պաշարուած ընտանիքները. վերջի վերջոյ մի կերպ կազակները հասնում և բոլոր հայերին ընտանիքներով հասցնում են խորհրդարանի հիւանդանոցը: Դոցա թիւը հասնում էր 200—300-ի: Խնչ վիճակի մէջ էին եկողները. քաղցած, տանջուած, պատառոտուած, սևացած հագուստներով, արիւնակալած աչքերով... չէին կարող համար տալ իրանց հետպատահածին, հարցներին պատասխանելու տեղ՝ ապշած երեսդ էին նայում կամ քարացած հայեացքը սևեռում տարածութեան մէջ: Եկողներից համարեա ոչ մէկը չէր վերցրել իր ունեցածից գոնէ մի մասը. հազիւ իրանց կեանքն էին կարողացել ազատել: Պատում և էին որ ոռոս բանուորները հրաժարուել էին զալ իրանց հետ, չնայելով որ ամբողջ Բամանին շրջապատուած էր հրդեհով:

Երեքշաբթի առաւօտուայ դէմ Սաբունչիի նաւթագործների խորհրդարանի հիւանդանոցը հաւաքուեցին համարեա բոլոր հայերը, 2000-ից աւելի: Այդ բոլորին տեղաւորել անկարելի էր. ամբողջ բակը, լուացքատեղը, ամառային հիւանդանոցը և բոլոր տեղերը լքցուած էին մարդկանցով: Այդ օրը ահագին բազմութիւն քաղցած մնաց. հիւանդներին անգամ մի-մի կտոր ցամաք հաց դժուարութեամբ էր հասնում, եթէ հետեւալ օրերը ճանապարհները չբացուէր և մի կերպ հաղորդակցութիւն չստեղծուէր՝ քաղաքից պաշար հասցնելու, գէթ ցամաք հաց, գուցէ և ստիպուած լինէին մեծ կորուստներ աչքի առաջ առած՝ վճռական քայլերի դիմել: Այդ կողմերը բոլորովին թուրքերից ազատ էր թէև, պաշտպանութեան համար կանչուած էին զօրքեր. իսկ յիշեալ բազմութիւնը պաշտպանոււմ էր հայ ղինուած

բանուորներով: Յանկարծ հիւանդանոցի շինութեան ետեւ կողմից նկատուած են, որ թուրքերը երկու տակառ մագութով մօտենում են հիւանդանոցին. հայերը շփոթուած, վախեցած շտապով վերցնում են զէնքերն ու ամեն կողմից սկսում են հրացանաձգութիւն: Այդ նկատելով դռների մօտ կանգնած կազակները՝ ենթադրում են որ հայերն իրենց դէմ են կրակում և սկսում են իրանք էլ պատասխանել. բարեբաղդաբար ոչ ոք չվնասուեց. թուրքերն էլ փախան: Բայց դրանից յետոյ թուրքերին անհանգիստ էր անում հայերի զինուած լինելը: Հայերը ի հարկէ բոլորովին մտադիր չէին եղել զօրքի դէմ կռուել: Յանկարծ ժամը 9-ի մօտերքը օդը թնդացնում են թխթանօթի 3 ուժգին հարուածները: Մարսափած՝ բոլորն սկսում են փախչել այս ու այն կողմ, խելագարների պէս իրար ետև պահուտուել, լաց, կոծ... Հազիւ ուշքի գալով՝ ենթադրում են որ դա միայն վախեցնելու համար էր, բայց գնդակի տրաքուած կտորները հաստատեցին իսկական ոռւմբ լինելը: Կարող էք երևակայել այնուհետև նրանց սարսափը. ուբակոծւում էին իրանց կարծեցեալ պահապան պաշտպաններից. ամենքը հաւատացած էին որ մինչև լոյս բոլորին կը կոտորեն. բարեբաղդաբար այս անգամ էլ զոհեր չեղան: Վնասուել էր մի պահարան և ուսումնարանի պատը դրսի կողմից:

Հետեւեալ առաւօտ հրամանագիր է ստացւում ոստիկանութիւնից, որ բոլորը զինաթափ լինին և զէնքերը ուղարկեն ոստիկանատուն, մի քիչ յետոյ յայտնուեցին զինուորներ, ամեն տեղ խուզարկեցին, բոլորից, նոյն իսկ իրաւունք ունեցողներից խլեցին զէնքերը ու սայլերով տարան ոստիկանատուն. իսկ ժողովրդին զինուորներով քաղաք ճանապարհեցին: Հայերը հեռանալուց առաջ, զէնքերի մի մասը թաղել էին հիւանդանոցում, բայց նրանց գնալուց անմիջապէս յետոյ, բահ ու բրիչով գալիս են կազակները ու բոլորը հանում տանում: Այնուհետև զօրքը լոկ ուղեկցելումէ էր օգնում: Երեք օր «Մառչատնիկում» պաշարուած և անդադար կռուելուց յետոյ, պաշարի պակասութիւնը մի կողմից, հրդեհի առաջնաալը միւս կողմից, ստիպում է հայ զինուած տղաներին՝ ընտանիքներին յանձնել մի կերպ խորհրդարանի հիւանդանոցը: Եւ որովհետև այնտեղ էլ պաշարի պակասութիւն է զգացւում, քաղաքից բերելն էլ անհնար, որոշում են զինուորների և զինուած հայ տղաների պաշտպանութեամբ քաղաք ուղարկել: 3—4 ժամին ճանապարհուում են. զինուորները նրանց առաջնորդում են ոչ թէ կայարան, այլ ոստիկանատուն, որը բաւականին հեռու է

կայարանից. այնտեղ նրանց զէնքերը առնում են ձեռներից և որպէս զի համոզուեն որ այլ ևս ոչինչ չկայ մօտները, դատարկ փամփուռներով հրացանի են բռնում. շատերը վախից ուշաթափ են լինում. այդտեղ էլ, էլի նոյն ողբերգական տեսարանն է բացւում. մինչև ուշքի են գալիս ու բանի էութիւնը հասկանում, նրանց հրամայւում է հեռանալ, բայց ճիւղտեղ կարող էին գնալ. մինչ այդ, նրանց ուղեկցում էին զինուած հայ տղաները, այժմ նրանցից խուած էր վերջին դանակն անգամ. մնում էր խնդրել, որ թոյլ տան այնտեղ սպասել գնացքին. իսկ այդ յաջողւում է նրանց միայն երեկոյեան 8-ի գնացքով, երբ զինուորները կայարանում թուրքերի յարձակմանը ենթարկուած, ոստիկանութիւնից յետ են կանչւում սոսիկանատան առաջ. խեղճերին մի կերպ յաջողւում է թափուել գնացք ու քաղաք գալ: Իսկ քաղաքում չէին կարող կայարանից հեռանալ. պատերազմական դրութիւն էր յայտարարուած, 8-ից յետոյ փողոցում զտնուողներին հրացանի կը բռնէին. այդ ահագին բազմութեանը մնում էր գիշերել կայարանի առաջ. նոյն վիճակն էր սպասում հազարաւորներին: Զբոսաւոր Փիթոյից մի քանի մարդիկ են ընտրուում ուղարկոււմ ոստիկանատուն, օգնութիւն խնդրում պաշարուած դրութիւնից ազատելու: Նրանց զինաթափ են անում և պահանջում հեռանալ, իսկ նրանց հարցին թէ անդէն չենք կարող գնալ, գոնէ զինուորներ տուէք որ մեզ տեղ հասցնեն մեր ընկերներին ասելու ձեր մերժման մասին—նրանք պատասխանում են. «հեռացէք ուր կամիք, դուք անարժան էք պաշտպանութեան. երբ մեր զինուորները ձեզ պաշտպանում էին, դուք զէնքը նրանց դարձրիք. մատնացոյց անելով նաւթագործների խորհրդարանում պատահած դէպքը. իհարկէ անդէն և անպաշտպան վերադառնալ չէին կարող, ստիպուած քաղաք են գալիս: Իսկ Փիթոյեանի գործարանում պաշարուած ու ամեն հաղորդակցութիւնից կտրուած 150—200 հայեր միայն վեցերորդ օրն են օգնութիւն ստանում և միշտ միևնոյն ձևով նախ զինաթափուում և ապա առաջնորդւում: Վերջիններս ու դեռ երկու մեծ ֆիրմաներում պաշարուածները—Մանթաշեանում և Արամազդում—նոյնպէս նոյն պայմաններում են լինում: Արամազդից 5 երորդ օրը, իսկ Փիթոյեանը բոլորովին յոյսը կտրած, որ մի որեւէ տեղից օգնութեան կը գան ընտանիքներին շրջապատած զինուած հայ տղաները տանում են Մանթաշեանի գործարան որպէս զի գիշերով, միացած ուժերով, քաղաք գան: Բայց քիչ յետոյ գալիս է զօրքը, առաջարկում թէ ով մտադիր չէ շարունակել թուրքերի հետ կռիւր, կարող

է յետ քաշուել, իսկ եթէ ուզում են ազատուել, նախ պէտք է գէնքերը յանձնեն, անձնատուր լինեն. միայն այդ դէպքում յանձն կառնեն առաջնորդելու. պայմանն ընդունւում է, որպէս չարիքներից փոքրագոյնը: Այդպիսով Բալխանիում գտնուող բոլոր հայերը դատարկուեցին, տեղի տալով թուրքերին ու լեզգիներին, որոնք քաղցած գայլերի պէս թափուեցին հայերի ինչքի վրայ, բոլորը թալանեցին: Փիթօսից հեռացողները իրանց ձեռքով կրակ են գցել ու այրել բնակարաններն, ունեցած-չունեցածը մէջը: Նորա պատմում են թէ վեցերորդ օրն էր պաշարուած էին, նայում են դէպի Ջարբատ թուրք գիւղը և զարմանքով տեսնում, որ բոլոր թուրքերը բռնաւորուած գիւղից հեռանում են՝ տանելով իրանց ունեցած-չունեցածը. չի հասկացւում ինչո՞ւ, գաղթում են, թէ՛ հեռացւում: Չանցած մի երկու ժամ, ումբակոծւում է դատարկ գիւղը ոստիկանութեան ձեռքով:

Օգոստոսի 25-ին թուրքերն արդէն գոհ և բաւական իրանց արածներից՝ հաւաքւում են նահանգապետի դռան առաջ և խնդրում որ հայերից պահանջի հաշտուել. հաւաքւում են սրիկաներ անագին թուով, գլուխ ունենալով թուրք կեղծաւոր մեծամեծներին, մի քանի հայ խաղաղասէրներին ու թուրք հոգևորականութիւնը, շրջում են փողոցները «հաշտութիւն» աղաղակելով. որ հայերի կողմից համարեա արձագանք չգտաւ և շատ բնական է. մի կողմից հազարաւոր բանուորներ զրկուած իրենց ինչքից, գործից, ունեցած չունեցածից, Բալխանիից քաղաք է թափւում կիսամեռ դրութեան մէջ. միւս կողմից նրանց տունը քանդողը հաշտութիւն է առաջարկում, գուցէ ապագայում աւելի սոսկալի ոճիրներ գործելու համար. աւելացնենք և այն, որ երբ թափորը հաշտութեան աղաղակներով առաջ էր գալիս, նորա դիմացից բերում էին երկու ֆուրգոններով դիակներ փալաններով ծածկած... վերջապէս այս այն խաղաղութիւններից էր, որ թափօրի վերադարձին սրիկաները կնքեցին երեք հայ երիտասարդների արիւնով, սպանելով նրանց հէնց խաղաղասէրների քթի տակ:

ԲԻԲԻՀԷՅԲԱՏՈՒՄ. Կիւրակի օրը քաղաքից հասած լուրերից գրգռուած, թուրքերը խմբերով մտնում են ֆիրմաները, որտեղ և բանուորներ ու ծառայողներ կան. պահանջում կառավարիչներից իսկոյն հեռացնել բոլոր հայերին, «միևնոյն է կը կոտորենք» ասելով: Իրիկնադէմին հարիւրի չափ զինուած թուրքեր յարձակւում են Սատիսեանի նաւթահանքի վրայ, որտեղ երկու անգամ ետ են մղւում ուս ու հայ զինուած բանուորներից. վերջապէս փոքրամասնութիւն կազմող հայերը վճռում

են գնալ—միանալու մեծ ֆիրմաների հայերի հետ: Երկու-շաթի, վերջիններիս վրայ խուժում են թուրքերը, բայց լեռ մղում: հագիւ թուրքներին ցրուած՝ յայտնում են զինուորներ, զինաթափ անում հայերին, զէնքերը վերցնում: Նոյնպէս վարում են Մանթաշեանում: Նաւաստի զինուորները գալիս են պաշտպանելու որպէս թէ, բայց ոչ մի օգնութիւն չը հասցրած խլում են բոլորի զէնքերը և թողնում անպաշտպան—հեռանում այդպիսի մի կրիտիկական ըրպէում: Նախ քան Մանթաշեանում նաւաստիների յայտնուելը, այնտեղ տեղի է ունենում հետեւեալ դէպքը: Թուրքերից պաշարուած ժամանակ, դուրս է թու-չում 13 տարեկան մի հայ պատանի, որի հօրը սպանել են իր առաջ թուրքերը, յարձակւում է խմբուած թուրքերի վրայ, երկուսին սպանում, մէկին էլ վիրաւորում է, բայց ինքն էլ անթիւ գնդակների տակ վիրաւորւում, փախչելու ժամանակ զորւում ջրանցք ու շուտով մեռնում:

Այս բոլորից յետոյ, հայերին Բիբիհէյբաթում մնալ անհնարին էր. դուրս են գալիս ամեն բան թողած, ինչ, կարողութիւն. մի մասը գնում տեղաւորւում է Բայլով, միւսը քաղաքի Հայերի հեռանալուն պէս, թուրքերը յարձակւում են նրանց բնակարանների վրայ, բոլորը թալանում կոտորատում ու վերջն էլ կրակ տալիս: Քիչ չմնասուեցին այդտեղ և ուսանեւ ու այլազգիներ. թալանը վերջացնելուց յետոյ թուրքերը կրակ են տալիս մի անգամից Բիբիհէյբաթը զանազան ծայրերից, որ ամբողջովին բռնկւում է:

Մարսափելի էր այս բոլորը. ծայրայեղ յուսահատական բանւորների համար. նրանք ոչ միայն կորցրին իրենց այնքան տարուայ տշխատանքը, այլ և շատերը զրկուեցին իրենց սիրելիներից, և... ապագայ յոյսից: Ե՞րբ պէտք էր այդքան աւերմունքը շինուէր—վերականգնուէր, որ նոր գործ ստանար խեղճ բանուորը. իսկ մինչ այդ, ի՞նչ անէր քաղցած, տկուր, անգործ, անտուն: Եւ տուժում էր ոչ միայն հայ բանուորը, այլ և ուսուր, հրէան, ինքը—թուրքը:

Քաղաքի սարսափելի դէպքերը աւելի փոքր չափով արձագանք գտան Սպիտակ և Սև քաղաքներում: 20-ին շաբաթօրը, դեռ խաղաղ էր. միայն խուլ շշուկ էր պտտում թէ քաղաքում կոտորած է: Մանթաշեանի գործարանի հայ ծառայողները և Նոր-Քիշլի հայ գիւղի բնակիչները սկսեցին դիմադրութեան պատրաստութիւններ տեսնել: Տեղական թուրքերից վտանգ չկար. աւելի սպաւում էր թրքական Քիշլի գիւղի գիւղացիներից: Առանձին բնակարաններում ապրող հայ և ուսու բանուորները

Մանթաշեանի և մեծ գործարաններում տեղաւորուեցին: Երկու-
շաբթի երեկոյեան հրդեհուեցին թուրքերի ձեռքով Կասպեան
Ընկերութեան մազութի ամբարը: Ամբողջ օր ու գիշեր շարու-
նակուեց հրդեհը: այրուեցին վառուող ամբարների մօտ գտ-
նուող հայ բանուորների բնակարանները: Ընդհանրապէս Սև
և Սպիտակ քաղաքներում, հայկական Բիշլի գիւղում, հայերի
հետ պաշտպանուել են ուսները. յարձակում եղել է մի երկու
անգամ, միայն Մանթաշեանի գործարանի և ուրիշ մասերում,
բայց յետ են մղուել, չյաջողելով մինչև անգամ հրդեհել: Զօրքը
համարեա շատ քիչ դեր է խաղացել այդ կողմերում. մի երկու
անգամ միայն պատահմամբ կռուի են բռնուել թուրքերի հետ և
ցրուել՝ թողնելով մէկ կամ երկու վիրաւոր ու սպանուած. այս
գրութիւնը շարունակուեց մինչև ուրբաթ, իսկ յետոյ քիչ քիչ
ամեն բան իր սովորական ընթացքն ստացաւ: Երկու կողմն էլ
աւելի իրարից էին վախենում, քան թշնամաբար վերաբեր-
ւում...

Ահա դարձեալ ակնատեսի, մի հայ օրիորդի պատմածը,
որ մէջ բերինք:

Այնուհետև դարձեալ թափօր և դարձեալ կոտորածներ:

Սակայն, այդ միջոցներում, Զանգեզուրի գաւառում սկսել
էին թուրքերը: Ո՛չ մի պատմութիւն այդ դէպքերի մասին այն-
քան պերճախօս և ճիշտ չի լինիլ, որքան իրեն—իշխան Լուի
Նապօլէօնի պաշտօնական տեղեկագիրը, որ հաղորդեց Պ. Բուր-
գի Հեռ. գործակալութիւնը:—

«Մինչև Շուշուայ դէպքերը, որոնք սուր կերպարանք էին
ստացել Երևանի և Նախիջևանի դէպքերի ազդեցութեան տակ,
հայերի և թուրքերի յարաբերութիւնները լարուած չէին՝ շնոր-
հիւ գաւառական կառավարիչների (նաչալնիկ) և միմիայն
հատ-հատ էին երևան գալիս թշնամական ցոյցեր: Եղել են բռ-
նութեան և մարդասպանութեան դէպքեր: Շուշուայ դէպքերը
զօրեղ գրգռումներ առաջացրին հայերի դէմ: Սէյիդներ, Զան-
գեզուրի գաւառի և թափառող թուրքերից մի քանի ազդեցիկ
անձեր՝ հաւաքուեցին և խմբեցին ուրիշ գաւառներէց 8000 հո-
գուց աւելի: Հետեանքն այն եղաւ, որ որոշեցին ոտքի հանել
թափառական թուրքերին իրենց տեղերից (հայաւաններից) և ճա-
նապարհի վրայ գտնուող հայկական գիւղերը թալանի տալ:
Պիտի մասնակցէին դրան Զանգեզուրի 1200 ձիաւոր քիւրդի,
որոնք վերադառնում էին Շուշուայ գաւառից, նաև Պարսկաս-
տանից, սահմանից այս կողմ անցած 500 ձիաւորներ: Թափա-
ռական թուրքերի տուն վերադառնալը կատարուեց չորս գա-

նազան ուղղութիւններով: Իր ժամանակին գաւառական նաչալ-
նիկի ձեռք առնուած միջոցներով կարելի եղաւ Պարսկաստան-
վերադարձնել պարսիկ ձիաւորներին, որոնք արդէն հասել էին
սահմանից 25 վերստ այս կողմ—Նոջանքի բազար կոչուած տե-
ղին. յաջողուեց նոյնպէս համոզել ցրուելու քիւրդ ձիաւորներին
և Գերուսիի վրայով անցկացնել թափառականների երկու խմ-
բերին: Այսպիսով քաղաքի և մի շարք գիւղերի վրայ գործուող
յարձակումների դէմն առնուեցաւ: Այդ միջոցին Շուշուայ և
Ջաւախի գաւառների թափառականների խմբերը, որոնք Մին-
քէնդիի վրայով տուն էին գնում, օգոստոսի 20-ին և 21-ին,
յարձակուեց գիւղի վրայ, թալանեց ու վառեց, սպանելով 17
հայ, Այնուհետև յարձակուողները ուղղուեցին դէպի Ալիկուլիքէնդ
և այնտեղ հասան օգոստ 24-ին, գտան, որ Ջանգեզուրի երեք
գիւղական հասարակութիւնները պաշարուել են թուրքերով:
Դիւղերը գրեթէ ամբողջապէս քարուքանդ էին արուած և այր-
ուած աւելի քան 20 տուն: Օգոստոսի 25-ին գաւառապետին
յաջողուել էր ցրել թաթարներին և թափառականներին, որոնք
մեծ յարձակում էին գործել գիւղի վրայ. յաջորդը օրը կրկն-
ւում է յարձակումը, որի ժամանակ գաւառապետը 70 կողակ-
ներով ընդհարում է թաթարների հետ: Հրացանաձգութեան
ժամանակ սպանւում են մի կողակ, 7 հայ և շատ մուսուլման-
ներ:

Դեռ օգոստոսի 23-ին նա հասնում է Մինքենդ գիւղը,
որ թափառականները արդէն մի անգամ յարձակում էին գոր-
ծել: Այդտեղ նա տեղեկութիւն է ստանում, որ Նանգասարը
կատարելապէս վտանգաւոր դրութեան մէջ է: Սպան հեռանում
է այնտեղից իր կողակներով՝ օգնութեան հասնելու խանդա-
սարցիներին, սակայն դրա յետևից յարձակում են թուրքերը
Մինքենդ գիւղի վրայ և սպանում 140 հայ, իսկ 40 էլ վիրա-
ւորում: Այդ բոլորը կատարւում է պրիստաւի ներկայութեամբ,
որը ոչ միայն օգնութեան չի հասնում, այլև ոչինչ չի հաղոր-
դում յարձակման մասին սպային, որի համար գաւառական
պրիստաւը ենթարկւում է դատարանական պատասխանատու-
թեան:

Անկարգութիւնները շարունակւում են օգոստոսի 19-ից
մինչև 25-ը: Ներկայումս խաղաղութիւն է տիրում այդ գա-
ւառում, սակայն յարաբերութիւնները այն աստիճան լարուած
են, որ ամենաչնչին առիթն անգամ բաւական է սոսկալի արիւն-
հեղութիւններ առաջ բերելու համար: Գաւառը ընդմիջտ ապա-
հով պահելու համար անհրաժեշտ է չորս հարիւրեակ զինուոր-

ներ ունենալ գաւառի մէջ: Շնորհիւ տեղական գաւառապետի իմ հրամանով ձեռնարկած խիստ միջոցների յաջողուել է նրան թաւանած իրերի մի մասը վերադարձնել:

Ես արդէն միջոցների եմ ձեռնարկել տեղն ու տեղը որոնելու և պատժելու յանցաւորներին: Գնում եմ քարտաքանդ եղած դիւղերի բնակիչներին տեսնելու և խաղաղացնելու նրանց յուզուած մտքերը: Բժշկի օգնութեան համար անհրաժեշտ է 1000 ռուբլի, որպէս զի հնարաւոր լինի դեղօրայք և այլ անհրաժեշտ պարագաներ հայթայթելու:

Ժամանակ է, ամենամեծ ժամանակը, որ պետութիւնը ուշք դարձնի ազգաբնակութեան և պետութեան ահագին, դարհուրելի վնասներ տուող այս արիւնահեղ դէպքերին և վերջ տայ, խեղդելով մի անգամ ընդ միշտ այն բոլոր ձգտումները, որոնք կանաչ դրոշի տակ գործում են և աւերելու յառաջանում Կովկասն անգամ:

Եւ պիտի ասել, որ պետութիւնը ի վերջոյ ըմբռնեց բոլոր շարժումների բուն աղբիւրն ու պատճառները և սկսել է արդէն կտրուկ միջոցներ ձեռք առնել:

Սեպտեմբերի 7-ին Կովկասեան Տ. Փոխարքան մուտ գործեց Բազու. և առաջին գործն եղաւ հաշտութեան հրաւիրել հայ և թուրք ժողովուրդներին. ժողովներ եղաւ Գ. Նահանգապետի մօտ երկու կողմի առաջաւորներէց, հայերն առաջարկեցին իրանց պայմանները, որոնցով կարելի էր հաշտութիւնը տեւական կերպով ապահովել, դոցա մէջ գլխաւորն կէտերն էին՝ զրամական և անձնական երաշխաւորութիւնը. առերևոյթս հաշտութիւնը կայացած համարուեց, բայց մի երկու օրից, ինչպէս հաղորդեցին լրագիրները, դարձեալ խանգարուեց անհատական սպանութիւններով, սկսուած դարձեալ թուրք խուժանի կողմից, և այս շատ հասկանալի է, որովհետեւ նոքա չէին համաձայնել հաշտութեան էական կէտերին, որ առաջարկուած էր հայերի կողմից:

Այլ ևս ոչ մի կասկած չկայ, որ Կովկասում հայերին կոտորելը մի կազմակերպուած և կանխապէս պատրաստուած գործ է: Շատ ճիշտ է նկատում «Նոր-Դարի» առաջնորդողը, որ հայութիւնը վտանգուած է Կովկասում. և մեր ամենիս պարտքն է ժողովուել և լուրջ կերպով մտածել այս էական խնդրի մասին: Ի՞նչ նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար մեր կալուածներն ու ուսումնարանները, եթէ մենք զըր-

կուած կլինենք կեանքի ապահովութիւնից, երբ մենք չենք կորող Բարձրագոյնս մեզ շնորհուած բարիքները վայելել: Առաջ ու առաջ պէտք է մտածել անպահով ապրելու վերայ և ապա՝ լաւ ապրելու վրայ:

Մենք կարծում ենք, որ բացի մեր անհրաժեշտ ինքնապաշտպանութեան միջոցներից, խիստ կարևոր է, որ հայ ժողովուրդը միաբերան խնդրէ պետութիւնից, նախ պաշտօնապէս թոյլ տալ իրան ազատ կերպով ինքնապաշտպանութեան միջոցների դիմել և ապա զինուորական դատարան հիմնել յանցաւորներին պատժելու համար: Շատ կոտորեցինք և շատ կոտորուեցինք, բայց ո՞ր յանցաւորը՝ մէկ թէ՛ միւս կողմից ստացաւ իւր արժանաւոր պատիժը: Խուժանին զսպողը՝ ամենախիստ պատիժն է և երբ նա տեսնում է որ կարող է անպատիժ կերպով և սպանել և թալանել և այդ աւարով առանց քրտինք թափելու ապրել՝ այնուհետև նորա միջից բանական մարդը դուրս է գալիս և մտնում անզգայ և արիւնարբու գազանը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Օգոստոսի 6-ը նշանաւոր յեղափոխութիւն մտցրեց Ռուսիայի կեանքի մէջ. այդ օրը հրատարակուեց բարձրագոյն հրովարտակ, որով կայսրութեան ամբողջ բնակչութիւնը հրաւիրուած է ընտրուած մարդկանցով կազմել Պետական Դումա — ժողովրդական մի ներկայացուցչութիւն, որ պէտք է մասնակցէ երկրի համար օրէնք կազմելուն: Այդպիսով այսուհետև ինքը ժողովուրդը յայտնի չափով պէտք է մասնակցէ երկրի կառավարութեան գործին, ընտրելով դորա համար իր միջից արժանաւոր ներկայացուցիչներ:

Ռուսիայի ժողովուրդը վաղուց ձգտում էր միջամտել երկրի կառավարութեան գործին, բայց միշտ էլ յետ էր մղւում ոռու բիւրօկրատիայից, բայց այժմ նորա իրաւունքները ճանաչուած և գործադրութեան են մտած Կայսերական զահոյքից տուած վերոյիշեալ հրովարտակով, որի հայ թարգմանութիւնը բերում ենք այստեղ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբ Աստուծոյ Մենք Նիկողայ Նրկերդը, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Թագաւոր Հեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիայի և այլն և այլն և այլն: